ՍԻՐԱՆ ՍԵԶԱ ՅԱՌԱՋԱՄԱՐՏԻԿԸ

Posted on October 3, 2023 by Keghart



Category: Opinions

Նառա Դանիելյան, Երևան, 30 Սեպտեմբեր 2023

Սեպտեմբերի 8-ին լրացավ լիբանանահայ արձակագիր, հրապարակախոս, խմբագիր Սիրան Սեզայի մահվան 50-րդ տարելիցը: Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում կազմակերպված միջոցառման շարժառիթը մեր մշակույթի հերթական մեծի գրական ավանդը գնահատելն ու վերարժևորելն էր: Թանգարանին է ի պահ տրված Սիրան Սեզայի անձնական արխիվը՝ արժեքավոր ձեռագրերն ու հարուստ նամականին: Բեյրութից Լոս Անջելոս հասցված ու այնտեղ տասնամյակներով հանգրվանած արխիվը դասավորելու և այն Հայրենիք առաքելու գործում մեծ ներդրում ունեն Երեւանի պետական համալսարանի բանասիրության բաժանմունքի շրջանավարտներ դոկտ. Մինաս Գոճայանն ու իր տիկինը՝ Նազելին:

Սիրան Սեզա (Սիրան Տաճատի Զարիֆյան-Քյուփելյան) ծնվել է 1903 թվականի փետրվարի 9-ին՝ Կոստանդնուպոլսի ասիական ափի Սկյուտար թաղամասում՝ մշակույթի ու արվեստի մթնոլորտում ապրող ընտանիքում (քույրն է բանաստեղծ Մատթեոս Զարիֆյանի, որի գրականությունը հանրայնացնելու գործում հսկայական է Սեզայի ավանդը): Ավարտել է տեղի Ատաբազարի աղջկանց ամերիկյան քոլեջը և Նյու Յորքի Կոլումբիայի համալսարանի գրականության-լրագրության ու լեզուների բաժինը: Հակառակ ԱՄՆ-ում մնալու իր դասախոսների և ծանոթների հորդորներին, վերադարձել է Լիբանան՝ հայուհիների կրթական մակարդակի ու հասարակական դերի բարձրամանը նվիրվելու առաքելությամբ, Բեյրութում հիմնել «Երիտասարդ հայուհի» հանդեսը և 1932 թվականի հոկտեմբերին սկսել այն հրատարակել իր խմբագրությամբ: 1932-1934 եւ 1947-1968 թվականներին ընդհատումներով 16 տարի լույս տեսած պարբերականի էջերում Սեզա անդրադարձել է հայապահպանման խնդրին, կարևորել հայ կնոջ դերը մանուկների հայեցի դաստիարակության գործում, հարատև պայքար մղել հայ և նույնիսկ օտարազգի կնոջ տարբեր իրավունքների նվաճման համար: Օրինակ, Սեզա էական դեր է ունեցել Լիբանանի խորհրդարանում կանանց ընտրելու և ընտրվելու իրավունքի ձեռբերման պայքարում (1953 թվական): «Պատնեշը» և «Մեղավորուհին» ժողովածուներում ամփոփված պատմվածքներում Սեզա կերտել է հայ և այլազգի կանանց կերպարներ, որոնք բարոյական հենարան են փնտրում՝ շիտակ

ապրելու համար: 1967 թվականի վերջին Լիբանանի հանրապետության նախագահ Շարլ Հելուն Սեզայի մշակութային և հասարակական-դաստիարակչական գործունեության համար նրան պարգևատրել է «Մայրիների արժանյաց կարգի» շքանշանով:



Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի սրահում սեպտեմբերի 23-ին կայացած հուշ-ցերեկույթն սկսվեց ԳԱԹ-ի տնօրեն պարոն Վահագն Սարգսյանի բացման խոսքով: Նա ներկաներին հրավիրեց մեկ րոպե հոտնկայս լռությամբ հարգել վերջին օրերի մեր նահատակների հիշատակը: Իր խոսքում նա անդրադարձավ մերօրյա ցեղասպանությանը՝ կոչ անելով ազգովի համախմբվել՝ հաղթահարելու այս աղետը: Խոսելով Սեզայի մասին, նա հատկապես նշեց. «Սեզա թե՛ գրող էր, թե՛ խմբագիր և թե՛ հասարակական գործիչ: Նա արաբական Արևելքում առաջինն է եղել կանանց իրավունքների պաշտպանի դերում: Նա շփվել էր ժամանակի մեծերի՝ քաղաքական գործիչների, գրողների, արվեստագետների հետ, և գուցե այդ ծանոթություններն էին նրա մեծ թռիչքի նախապատրաստական հիմքերը: Սեզա դարձավ հայ և արաբ ժողովուրդների կանանց իրավական ազատությունների խորհրդանիշը»: Պարոն Սարգսյանը ավելացրեց. «Մենք հետաքրքիր ժամանակներ ենք ապրում. Հայ գրականագիտության մեջ ստեղծվում է մի նոր ուղղություն՝ սեզայագիտություն: Շնորհիվ Գևորգ Յազըճյանի եռանդուն աշխատասիրության, շուտով մեր սեղաններին կունենանք Սեզայի հսկայածավալ նամականին, շատ հավանաբար՝ 4 հատոր, 2500-3000 էջ: Նամակների ամեն մի գաղտնաբառը, ամեն մի մութ անկյունը Գևորգ Յազըճյանը լուսաբանում է՝ սրանով մի նոր կյանք բերելով Սեզայի ստեղծագործությանը: Անհամբերությամբ սպասում ենք հատորների տպագրությանը:

Այդ նամականիով, Սեզա մեզ վերադառնում է՝ թեկուզ 50 տարի անց»։

Տեսաելույթով հանդես եկավ լիբանանահայ ճանաչված գրող, կրթական եւ հասարակական գործիչ Պեպո Սիմոնյանի այրին՝ տիկին Ազատուհի Սաչյան-Սիմոնյանը: Նա առաջինն է ելույթ ունեցել 1967 թվականի դեկտեմբերի 7-ին Բեյրութի «Գալուստ Գյուլբենկյան» սրահում կազմակերպված և Սիրան Սեզայի գրական գործունեության 45 ու «Երիտասարդ հայուհի» թերթի հրատարակության 15-ամյակի առթիվ կազմակերպված մեծարանքի հանդիսությանը: 56 տարի անց, նույն բանախոսը նորովի գնահատեց Սիրան Սեզա երևույթը. «Սիրան Սեզան շարունակողը եղավ սփյուռքահայ իրականության մեջ իրեն նախորդող ժամանակաշրջանի ականավոր կանանց՝ Սրբուհի Տյուսաբի, Սիպիլի, Զապել Եսայանի և Հայկանուշ Մառքի: Լիբանանի մեջ հրատարակվող «Երիտասարդ հայուհի» թերթը մեծ ազդեցություն ուներ լիբանանահայ և սփյուռքահայ կանանց մշակութային, գրական, ազգային և հասարակական կյանքի վրա: 50-ական և 60-ական թվականներուն Սեզա հաճախ բեմերու վրա էր՝ գրական, մշակութային և ազգային տոնակատարություններու և հանդիսություններու ժամանակ: «Երիտասարդ հայուհի»-ն կշռշափեր կանանց խնդիրները՝ հառաջդիմական հայացքներով: Համոզված ըլլալով, որ հայ կնոջ տեղը ընտանիքին մեջ անփոխարինելի է, այդուհանդերձ, Սեզա կքաջալերեր կանանց մասնագիտական հառաջխաղացումը և մասնակցությունը մշակութային, հասարակական ու քաղաքական կյանքին»:



Տիկին Սիմոնյան այնուհետ ավելի մանրամասն խոսեց Սեզայի խմբագրած պարբերականի բովանդակության և աշխատակիցների մասին: «Սեզայի «Երիտասարդ հայուհի»-ն, բացի կանանց հարցերուն նվիրված առաջնորդողներեն ու հոդվածներեն, կանդրադառնար գրական, կրթական, մշակութային հարցերու: Աշխատակիցները անվանի դեմքեր էին՝ Բյուզանդ Եղիայան, Անդրանիկ վարդապետ Կռանյան, Վահե-Վահյան, Վարդան Գևորգյան, Ներսես Քյուփելյան, Ստեփան Շահպազ, Միհրան Տամատյան և այլք»: Տիկին Սիմոնյան

իր ելույթում հարմար չէր համարել հիշատակել, որ ինք ևս աշխատակցել է պարբերականին 1966 թ. մարտից մինչև վերջին համարը 1968 թ. դեկտեմբերին: Նա հավելեց. «Սիրան Սեզա լիբանանահայ գաղութի սիրված և հարգված խմբագիրն ու գրագիտուհին էր: 1940-1960 ականներուն ան գործեց, խոսեցավ և գրեց՝ հրապարակելով իր տեսակետները ազգային, քաղաքական, մշակութային և կրթական հարցերու առնչությամբ: Ան խիզախ մտավորականի կերպար էր. չէր վարաներ բացարձակ ճշմարտությունը հայտնաբերելու և բարձրաձայնելու՝ նույնիսկ հակառակորդներ ունենալու գինով: Սեզան բազմակողմանիորեն զարգացած մտավորական էր նաև: Ան խորապես ծանոթ էր հայ գրականությանն ու դպրությանը, մշակույթին ու պատմությանը, քաջատեղյակ էր համաշխարհային գրականության ու արվեստի երևելիների գործերին»:

Ծավալուն, բազմաբովանդակ էր գիտնական, պատմաբան Գևորգ Յազըճյանի սեզայագիտական խոսքը. «Սիրան Սեզան անկախ մտածողի, խիզախ մտավորականի կնոջ և պայքարող տեսակի տիպար էր»: Բանախոսը մի շարք շատ հետաքրքրական փաստեր նշեց. Պարզվում է, որ «Երիտասարդ հայուհի»ն Լիբանանում լույս տեսած առաջին կնոջական պարբերականն է և առաջիններից մեկը ամբողջ արաբական աշխարհի երկրներում: Սեզա լիբանանյան պարբերական մամուլի առաջին կին խմբագիրն ու հրատարակիչն է: Յազըճյան շեշտեց ևս մեկ փաստ, որին հանդիպել է Սեզայի նամականիում. Սեզային չի բավարարել 1953 թվականին լիբանանցի կնոջ ընտրական իրավունքի նվաճումը: Նա հանրապետության նախագահին բաց նամակով դիմել է՝ նրանից պահանջելով ապահովել այդ իրավունքի անկաշկանդ իրացումը՝ բացառելով ընտրող լիբանանուհիների ազատ կամքի վրա նրանց հայրերի, եղբայրների, ամուսինների և այլոց բռնացումը:

Սեզայի նամականու հրատարակումը նոր լույս կսփռի նրա թողած գրական ու հրապարակախոսական հարուստ ժառանգության վրա:

Միջոցառման ընթացքում մոր և Հայրենիքին նվիրված ոգեշունչ երգերով հանդես եկավ ճանաչված երգիչ, երգահան և առակագիր Արսեն Համբարյանը՝ առինքնելով ներկաներին իր հզոր ձայնով:

Միջոցառմանը ներկա էին Սիրան Սեզայի որդին՝ Վահագն Քյուփելյանը, հարսը՝ քանդակագործ Անահիտը (Անին) և իրենց որդին՝ Ազատը, նաև՝ Սեզայի գրական և հրապարակախոսական վաստակը գնահատող մտավորականներ, որոնց մեջ զգալի տոկոս էին կազմում այս օրերին Հայրենիք այցելող սփյուռքահայ գրողներ, հրապարակագիրներ, մշակույթի ու արվեստի գործիչներ:

There are no comments yet.